«ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային տարածքը: (ՀՀ Լոռու մարզի Ալավերդի, Ճոճկան, Հաղպատ, Մեծ Այրում, Նեղոց, ՀՀ Տավուշի Այրում համայնքները)

Հանդիպան վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի (քաղաքապետարան)

Ամսաթիվ՝ 20 հունվար 2017 թ., ժամը 14:00

Հանդիպման նպատակն էր, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտը շահառու և ազդակիր հանրության տեղեկացումը և հանրային քննարկումների կազմակերպումը:
Հանդիպման մասնակիցների ցանկը ներկայացված է Հավելված 1-ում:

Օրակարգ

Նիստը բացեց **«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ** 1-ին բաժնի էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրերի համակարգող **Ռոբերտ Առաքելյանը**: Նա ողջունեց հանդիպման մասնակիցներին և ծանոթացրեց հանդիպման օրակարգին՝ խոսելով նաև ծրագրի ակնկալվող արդյունքների մասին:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գլխավոր բնապահպան՝ Տիգրան Օգանեզովը խոսեց «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գործունեության, համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի մասին և ներկայացրեց հանրային քննարկումների նպատակը:

Այնուհետև **Ծրագրի խորհրդատու ընկերության բնապահպանության գծով փորձագետ/ Միքայել Թևոսյանը** ներկայացրեց «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի Շրջական միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը:

ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի համայքապետ Արկադի Թամազյանը հնչեցրեց հետևյալ հարցը՝ «անտառահատման և անտառատնկման աշխատանքների ընթացակարգը ինչպես է իրականացվելու»:

Հարցին պատասխանեց Միքայել Թևոսյանը՝ «դիմելու ենք անտառտնտեսությանը, իսկ ՀՀ օրենսդրության և Համաշխարհային Բանկի պահանջներից ելնելով պետք է ապահովենք նոր տնկիների 70% կպչողականություն և/կամ 3 տարի պահպանման ժամկետ»:

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ներկայացուցիչը հնչեցրեց հետևյալ հարցը՝ «ապահովվելու է արդյոք անվտանգության պահանջները էլեկտրամագնիսական դաշտի ազդեցության պայմաններում»:

Հարցին պատասխանեց Միքայելը. «կան հստակ սանիտարական նորմաներ, էլեկտրական գծերի տակ շինարարություն չի կարելի իրականացնել և հաստատել մշտական բնակություն, սակայն գյուղատնտեսական նպատակների համար կարելի է օգտագործել հողատարածքը», ապա շարունակեց Ռոբերտ Առաքելյանը. «պահպանվելու են անվտանգության բոլոր նորմատիվները»:

ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրում համայնքի համայնքապետ Սահակ Նազարյան՝ հնչեցրեց հետևյալ հարցը «ցանկատարածքների մշակման ժամանակ անկյունային նշահարման կետերը հնարավոր է տեղափոխվեն և նոր ազդակիր անձիք ի հայտ գան»:

Հարցին պատասխանեց Ռոբերտ Առաքելյանը. «ՎԳՊ իրականացման փուլում համապատասխան հետազոտության խումբը կրկին այցելելու է տեղանք ճշգրտումներ կատարելու և ազդակիր անձանց ճիշտ հատկորոշելու նպատակով»:

ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի համայքապետ Արկադի Թամազյանը հնչեցրեց հետևյալ հարցը՝ «եթե հանվում է հողի բերի շերտը հետագայում ինչ է լինելու այդ հողի հետ»;

Հարցին պատասխանեց Միքայել Թևոսյանը ՝ «հողը պահպանվելու է օրենքով սահմանված ընթացակարգի համաձայն», ապա շարունակեց Տիգրան Օգանեզովը՝ «եթե շինարարական հրապարակում առկա են համապատասխան պայմաններ հողի բերի շերտը պահելու համար, ապա այն պահվում է այնտեղ, եթե ոչ դիմում ենք համայնքին համապատասխան տարածք տրամադրելու համար»:

ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի համայքապետ Արկադի Թամազյանը հնչեցրեց հետևյալ հարցը՝ «ինչպե՞ս է որոշվելու հողի արժեքը»:

Հարցին պատասխանեց Ռոբերտ Առաքելյանը՝ գոյություն ունի հողատարածքի կադաստրային և շուկայական գին, վճարումը կատարվելու է հիմք ընդունելով այդ արժեքներից առավելագույնը, ինչպես նաև լրավճար 15% Համաշխարհային Բանկի ընթացակարգին համաձայն:

ՀՀ Լոռու մարզի ճոճկանի համայքապետ Արկադի Թամազյանը հնչեցրեց հետևյալը՝ եթե օտարման ադյունքում գյուղատնտեսական հողի գործառնական նշանակությունը վերանում է, ապա այդ դեպքում այն ամբողջովին օտարվում է թե ոչ:

Հարցին պատասխանեց Ռոբերտ Առաքելյանը եթե պահանջը հողի օգտագործման առումով հիմնավորված է, ապա այո:

ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրում համայնքի համայնքապետ Սահակ Նազարյան առաջարկեց օգտագործել տեղական աշխատուժ:

Նիստը ամփոփեց «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 1-ին բաժնի էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրերի համակարգող Ռոբերտ Առաքելյանը:

ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արթուր Վարդանյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 1-ին բաժնի էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրերի համակարգող՝ Ռոբերտ Առաքելյանը

Խորհրդատու ընկերության բնապահպանության գծով փորձագետ՝ Միքայել Թևոսյան

Կապալառուի՝ ենթակապալառու «Ռեդինետ» ՓԲԸ ընկերության ներկայացուցիչ՝ Մեսրոպ Մեսրոպյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ բնապահպան՝ Հասմիկ Խաչոյան /Արձանագրող/

«ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ Լոռու մարզ, քաղաք՝ Ալավերդի, *20 հունվար 2017 թ., ժամը 14.00*

	Անուն Ազգանուն	Պաշտոն	Հեռ/ էլ փոստ	Ստորագրություն
1.	Տիգրան Օգանեզով	ԲՀՄՀ գլխավոր բանագնաց	togane20@yahoo.com 091002011	
2.	Աստղիկ Սարգսյան	Հաշվապահ հաշվ. գծով	099837314	
3.	Շահան Զալեն	Ավագ իրավաբան բաժն	099-03-22-05	
4.	Աստղիկ Գևորգյան	Ալավերդի գլխ. լուսավոր	077854900	
5.	Սահակ Բաղդասարյան	ՎԼՀՏ Սյունիքի գյուղապետ	093985413	
6.	Դավիթ Սիսուքիրյան	ԳԷՄ ՓԲՀ գլխ. - գլխավոր տեսչի տեղակալ	093 90 80 02	
7.	Արկադի Ն-ցյան	ՀՈՍԿՀ գլխավոր		
8.	Հասմիկ Լուսաբերյան	Հանձնակ գլխ	055555601	
9.	Mehran Ahmadi	Design Eng. from GAM	098336923	
10.	Dariush Ranjbar	surveyor from GamArak LLC	098448635	
11.	Արամ Հարությունյան	ԲՀՄ «Հանրային ծառայություն»	098287090	

12.	[illegible]	[illegible]	094-03-55-37	
13.	[illegible]	[illegible]	098-05-05-01	
14.	[illegible]	[illegible]	093-94-94-94	
15.	[illegible]	[illegible]	094-007-655	
16.	[illegible]	[illegible]	098-004-059	
17.	[illegible]	[illegible]	099-40-61-80	
18.	[illegible]	[illegible]	098 86 01 47	
19.				
20.	[illegible]	[illegible]	099 547-745	
21.				
22.				
23.				
24.				
25.				
26.				